

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվա 6 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են միմյանի նամակները:

(Ստաբիլիտետի և օրհանգիստի)
Тифлисс, Редакция „Менк“

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Տաղի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Օգնենք: — Եւրոպայի տեսութիւն: Նամակ
Ախալքալաքից: Ներքին լուրեր: Արտաքին
տեսութիւն: Վաճառքի թղթակցութիւն: Նա-
մակ թիւրքալից: Նախնայ լուրեր: Զայտարարու-
թիւններ: Տեղեկացոյց:

ՕԳՆԵՆՔ

Մի ծանր և տաղտկալի ըու-
թիւնից յետ կարելի եղաւ վեր-
ջապէս լսել հայկական աշխարհից
մի շարք ուրախաւիթ լուրեր. մէկ
կողմից անգլիական ազատամիտ
կուսակցութիւնը սկսեց նորից քրք-
րել հայոց խնդիրը, միւս կողմից
կ. Պօլսի ազգային ժողովը դարձ-
րեց Հայաստանի վրա եւրոպական
թերթերի ուշադրութիւնը: Կարճ
ժամանակում քանիցս անգամ ժո-
ղովի յայտնած հանդիսաւոր բո-
ղոքները և պահանջը, Ներսէս
պատրիարքի բռնած ազդու և
կտրուկ ընթացքը, մեծ պետու-
թիւններին ուղղած նոր պաշտո-
նական յիշատակագիրը, որ առա-
ջի դիպլոմատիական դժուարեւոր
է հայոց նորածին քաղաքական
ասպարիզի մէջ, բաւական կենսա-
սիրտեցին Հայաստանի մեծեւ
հորիզոնի վրա և հանգստացրին
նոցա, որոնց վատութեան տաղ-
նապը էլ չափը անցնելու վրա էր:
Եթէ ուրախալի է որ հայկական
հարցը այնչափ կարեւորութիւն է
ստանում որ կարողանում է մա-
տի մի բաւական հաստ փաթա-
թան դառնալ անգլիական պար-
լամենտում կուսակցութիւնների
ներքին մաքաւման մէջ, եթէ մը-
խիթարական է տեսնել որ 61
յօդուածը ձեւանում է մի անկու-
ռակ կոնսերվատիւ միսիստութեան
համար, եթէ ուրախալի է որ
մեր ազգի վիճակը շարունա-
կում է օրից օր աւելացնել այն-
պիսի եռանդոտ ջատագովների
թիւը ինչպէս ըրդ Վրանկի
Կարնարձն, Երզայեան դուքս և
ուրիշները, առաւել ևս նշանաւոր
է, առաւել ևս միսիթարական,
երբ կ. Պօլսի ազգային ժողովը
ձգտում է մտնել մի նոր, աւելի
լայն, քաղաքական գործունէութեան
մէջ, ձգտում է ստանալ
մի նոր դրութիւն միջազգային
պաշտօնական աշխարհում և բըռ-

նել մի ներգործական և աւելի
խնդրոյն ուղղութիւն թիւր-
քայի կառավարութեան առաջ:
Իր այս վճռողական քայլով ազ-
գային ժողովը որոշել է, ըստ ե-
րևութիւն, կամ բոլորովին դա-
դարեցնել իր առաջվայ կրակորա-
կան դերը և կիսամեռ գոյութիւ-
նը, կամ թէ միանգամից քանդել
այն կապերը, որոնցով սեղմած են
նորա բազուկները:

Բերլինի կոնգրէսը պատելով
հայ պատուիրակներին 61 յո-
դուածով, ճանաչեց այդպիսով
հայ ազգի քաղաքական իրաւուն-
քը խօսել Եւրոպայի հետ իր
ներկայացուցիչների լեզուով, ուրեմն
ազգային ժողովը ինչպէս ազգը
ներկայացնող մի հաստատութիւն
անհրաժեշտ իրաւունք պիտի ու-
նենայ մտնել կաբինետների հետ
անմիջական յարաբերութիւնների,
էլ զանց անելով այն հանգաման-
քը, որ այդ հաստատութիւնը
Սուլթանի պարզեւած արտօնու-
թիւնների վրա է կանգնած: Եթէ
Սուլթանը ուզէ էլ փշրել իր շե-
նածը, յետ առնել իր տուածը,
Բերլինի աւագածողովից յետ նա
էլ չը պիտի կարողանայ այդ ա-
նելու, վասն զի հայերի ազգային
ներկայացուցչութեան իրաւունքը
կրկնեց արդէն ամբողջ Եւրոպայից:
Եթէ եթէ ազգից բռնած նոր ըն-
թանքը հիմնված օրէնքի և իրաւուն-
քի վրա, չը պաշտպանէ անգլիա-
կան այժմեան միսիստութիւնը
կը պաշտպանեն ուրիշ աւելի ան-
կողմնապահ տերութիւնները: Ինչ-
պէս կը վերջանայ արդեօք հայե-
րի արած այս մեծանշան քայլը
կը տեսնենք շուտով, թէպէտ ի
հարկէ թիւրքիւն չը պիտի խնա-
յէ ոչինչ միջոցներ խեղդել գործը
նոյն իսկ սկզբում: Աստահու-
թիւնը, որը առաջ է գալիս պա-
հանջի արդարութիւնից, մի վայր-
կեան ևս չը պիտի թողնէ հայե-
րին, որոնք կորցնելով իրանց գոր-
ծը փտանդի կենթարկեն բոլոր
ապագան: Ի նկատի առնելով
ազգային կենսի այս մեծ ճգնա-
ժամը չենք կարող չը կոչել Եւ-
տուոմուն «խափանի վտանգը հէր»
խօսքերով իսկ միւս կողմից ան-
կարելի է չը հրաւիրել Ռուսա-
հայերին որ նորա էլ չը մնան

անտարբեր դէպի մի այսչափ նշա-
նաւոր գործ, այլ չը խնայեն
իրանց օգնութիւնը թիւրքիւն
մէջ միակ դերի բերատունեանե-
րին:

Մեծ անիրաւութիւն կը լինի
մեր կողմից ձեռքբեր ծալած
նայել թէ ինչպէս են տանում
կ. Պօլսի ազգայինները իրանց շա-
լակած բեռը և ոչինչ հոգացողու-
թիւն չունենալ այդ ծանրութիւ-
նը թէթեւացնելու համար: Ուրեմն
համակողմը թող շտապէ:

Գ. Նիկողոսեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆՈՒՄԱՆՈՒԹԻՒՆ

7 յուլիսի

Մի այսպիսի արկածային տարի շատ հազիւ է
պատահում:

Մի կողմից հրդեհները ամբողջ քաղաքներ մի
քանի ժամում փրատելի կոչու են դարձնում
և դեռ երկէ նրա հարուստ ու ուրախ բնակչին
այսօր բաց օդի տակ և կտոր հացի կարօտ են
թողնում, իսկ միւս կողմից, հեղեղները, կարկու-
տը, մորեղը, մոլը, երաշտութիւնը կարծես մի
դաշնակցութիւն են կազմել և սով են սպառնում
մեզ:

Վերք յիշված ժողովրդական թշուառութիւն-
ների երկուսից տանջվում է այժմ մեր գաւառը,
երաշտութիւնից և մկից:

Գող կատակելու դաղափարից դրված, ոչ
թէ միայն քաղաքացիք, այլ գիւղացիներ ևս սկսել
են հաց գնել: Հացի գինը ոչ թէ օրերով, այլ ժա-
մերով է բարձրանում և ահա մի ամառայ միջոցում
15-ից մինչ 25-27 ռուբլի դարձաւ հացի սոսորդը:
Այսպիսի չոր և տօթ էր կանգնած այսօր, որ
դժուարացնում էր մարդ չնաւորութիւնը, դաշտե-
րի վրա դալար խոտը և ցանքը համարեա վառված
էին, ժողովուրդը եկեղեցիներում հակումներ էր
կատարում և ահա երկինքը զթաց մեր վրա և
յորդ անձրև պարգևեց մեզ:

Թեմական վերադասուչ պ. Գ. Բարսեղա-
րեանց այցելելով մեր քաղաքը, հաւաքեց մի քա-
նի հակացող անձինք և յայտնեց որ ուսումնա-
րանք տարեկան 3000 ռուբլի եկամուտ ունենայով
դեռ 2000 ռուբլի ևս հարկաւոր է, որպէս զի նա
կարողանայ թիֆլիսից ուսուցիչներ ուղարկել և
բանալ 2 պատրաստական և մի առաջին դասա-
տուն:

Երկար խորհրդակցութիւններից յետոյ, որոշե-
ցին 15 օրվայ միջոցում եթէ կամ ստորագրու-
թիւնների բաց անելով, կամ մի այլ միջոցով կարո-
ղանան ձեռք բերել յիշեալ դուստրը, տեղեկացնեն
պ. վերադասուչին, որպէս զի նա ուղարկի ուսու-
ցիչներ, իսկ եթէ ոչ, մենք հարկաւորված պէտք է
լինենք օգտվել մի ևս նոյն պրօգրամայով: Ահա
հինգերորդ օր է ինչ պ. վերադասուչը գնացել
է այստեղից, բայց դեռ ոչինչ չէ սկսել...

Մենք պ. վերադասուչին ևս ասացինք և այժմ էլ
կրկնում ենք մեր համոզմունքը, մեր կարծիքով,
ժողովրդին պակասում են գործին սկզբնաւորու-
թիւն տուող անձինք, եթէ այդ անձինքը լինեն և
ընցա բարեկեցութեան վրա համոզված լինի ժո-
ղովուրդը նա խնայելու չէ իր փողերը նուիրելու
մի այդպիսի հանրապէս գործին: Թղթակցի մի
նուիրական պարտքն է դարձնել այն պարտքների

ուշադրութիւնը յիշեալ վերջին տողերի վրա. թող
նորա անցեալ տարվայ նուիրատուութիւնների ան-
յաջող ելքի պատճառով չը յուսահատուեն, իսկ
նրանք որոնք անցեալ տարի մեծ մեծ խօսում էին
և համարաւանում աւարտածներին ուսուցիչ կա-
մենում ունենալ, թող նորա ևս կարելութեան
չըջանակից չը դուրս գան, այլ ձեռք ձեռքի տուած
միաբան սիրով աշխատեն կատարելու համար մի
ամենամանրաթել կարեւոր պիտոյք:

Մեր կարծիքը մեծ է որ մեր քաղաքակիցները
կը բարեկարգեն մեր դպրոցը, որին անհամբերու-
թեամբ սպասում ենք. Պ. Բարսեղաւորեանց յանձ-
նել է հայր խորէն քանանայ Բարադեանցին հաւա-
քել ժողովուրդը և խօսել ձեռնարկելիք միջոցների
վրա: մինչ ցայժմ արժանապատիւ քահանան ոչինչ
արած չէ, բնչին է սպասում արդեօք:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆՈՒՄԱՆՈՒԹԻՒՆ մեզ գրում են. «Թէպէտ մի
քանի օր առաջ բաւական անձրևներ եկան քա-
ղաքում, դարձեալ սաստիկ չոր է: Յուլիսի 9-ին
մեռելոցի օրը ախալքալաքից երկրասարդները
կատարեցին եկեղեցում հանդուցեալ Ստեփանոս
Նազարեանի հողհանգիստը: Հանդիսին ներկայ
էին երկուսու դպրոցների աշակերտները: Գաղաղ
վրա դրված էր հանդուցեալ պատկերը վարդերով
չըջապտոված: Հանդիսի ժամանակ պ. խ. Մա-
ռանկոյեանց մի ճառ կարդաց, որով նկարագրեց
հանդուցեալի կենսագրութիւնը: Մի ուրիշ ճառ ևս
կարդացվեցաւ հանդուցեալի մասին»:

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ. «Այստեղի աղ-
քատանցում եկած անանկները և արհեստաւորաց
դպրոցի աշակերտները ամենքը հիւանդացած են:
Յուլիսի 29-ին ճաշելուց յետոյ ամենքը սկսում են
փսխել մինչև կիսամեռ ընկնում են: Կանգնած բը-
ծիչը հիւանդներին վտանգաւոր դրութեան մէջ է
գտնում: Ասում են, որ հիւանդութեան պատճառը
վատ կերակուրն է եղել, որի համար պաշարի գնելը
մի պահապանի է յանձնված»:

Ընթերցողների ուշադրութիւնը դարձնում ենք
ներկայ համարում տպված թիւրքիւնի նամակի
վրա: Այդ նամակի վերջում տեղեկութիւններ է
տուած կ. Պօլսի դերասանների և նրանց քաղա-
գործութիւնների մասին: Մեր թատրոնական գոր-
ծը յանձնվում է այնպիսի մարդկերանց, որոնք
դերասանութիւններին ծեծելու արհեստի մէջ վարժ-
ված են: Պ. Հայկակ ասում է որ պ. պ. Պատուէ-
ճեան և Աղամեան կ. Պօլսի միակ օրինաւոր հայ
դերասաններ են: Պ. Պատուէճեանի անընդունա-
կութեան հետ թիֆլիսի հասարակութիւնը վաղուց
ծանօթ է, եթէ պ. Աղամեան էլ նրա նման է,
հայ ներկայացուցիչների ժամանակ հասարակութիւնը
մեծ դուրսդութիւն կունենայ, էլ չի ասվի: Կեռ
այդ երկուսը կ. Պօլսի ընդունակ հայ դերա-
սաններ են, իսկ եթէ միւսներըք էլ բերեն այն
ժամանակ ինչ կը լինի: Մենք ի գուր չապացնեք,
որ թատրոնական կոմիտեը երկակայական ցնորը-
ների ետեւից է ընկած: Ի դուր չէ, որ մենք իդիօտ-
ներ ենք համարում այն մարդկերանց, որոնք յան-
դգնում են ասել, որ պօլսեցի թիւթեւօլիկները
պէտք է կրթին մեր նոր սկսող դերասաններին:
Մենք չենք դարմանայ, եթէ մի ներկայացման ժա-
մանակ յանկարծ կը լսենք դերասանութիւնից մէկ
լացը, որ իր վրա կը փորձէ պօլսեցի կրթիչների
բազուկները ոյրը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Պարտ կը համարիմ հրապարակաւ շնորհա-
կալութիւնս յայտնել Վասայ կուսակալու:

Թեան Մուսլին Վսեմ. Աղաթօն Մկրտիչ Էֆենտիին որ Վէճիխի Իտարէ յի անդամն րէն Գալճեան Վսեմ. Գէորգ պէյի և Քէմէ- երդի-Հուզուգի և Վսթիմաֆի Ժողովոյ անդամ և կուսակալին անձնական զանձապետ Տիրացուեան Յակոբ Էֆենտիին և մեր ազգային Քաղաքական Ժողովոյ անդամներէն Քէրդի- պաշեան Յարութիին Էֆենտիին ընկերակցու- թեան վարժապետանոցին: Արարատեան սա- ներ ազգային երգերով զինմանորցիին այդ բարձրաստիճանն Հայ պաշտօնատարներն, և Բ. դասարանի աշակերտներէն Պ. Մկրտիչ Քէր- լէմեղեան կարգաց մի աւելբձ, զոր ինքն պատրաստած էր, առ Վսեմ. Աղաթօն Է- ֆենտիին ուղղելով: Նորին վսեմութիւնն իւր բարձրաստիճանն ուղեկիցներով միասին բաւա- կան ժամանակ քննեց և խրախուսեց աշա- կերտներն: Բ. դասարանի աշակերտներուն կարողութիւնը ճշդիւ իմանալու համար ա- ռաջարկեց իւր ներկայութեան անմիջապէս մի բան գրել հետեւեալ քաղաքական նիւթին վրայ, թէ վերջին Արեւելեան պատերազմն ինչպէն ծագեցաւ և ո՞ր յանգեցաւ: Հազիւ տաս րոպէ անցաւ և ամեն աշակերտներ ներ- կայացուցին իրենց գրածը: Այդ գրութիւնն րէն ընտրեալագոյնը Արարատեան վարժապե- տանոցի Բ. դասարանի աշակերտներէ Պ. Մ. Քէրլէմեղեանի շարադրութիւնն էր, որ ոճոյն կանոնաւորութեանը և իմաստոյ կարգաբա- նութեանը պատճառաւ մեծ գոհութիւն պատճառեց ազնուաշուք այցելուաց:

Վսեմ. Աղաթօն և Տիրացուեան Էֆենտի- ներն մի քանի խօսք ուղղելով աշակերտաց մեկնեցան վարժապետանոցէն, քաղցր յիշա- տակ թողլով ամենուն սրտին մէջ: Աշակեր- տներն խմբովին յուզարկաւոր եղան վերջի- շեալ Էֆենտիներուն, ազգային երգեր երգելով:

Ահաւասիկ կը յիշմ Զեկ Վսեմ. Աղաթօն և Տիրացուեան Էֆենտիներուն խօսածներն, և կը խնդրեմ որ ներկայիս մի անկիւն շնորհե- լով Զեր պատուական օրաթերթի մէջ, բա- րեհաճիք հրապարակ հանել մեր խորին շը- նորհակալութեան զգացումներն:

Սիրելի աշակերտք. Ազգին բարոյական ու նիւթական յառաջդիմութեան համար որ- չափ ընկերութիւնը կան ու կը գործեն, ա- սոնց ամենէն ալ դատ յանկեղծ սրտէ շնոր- հակալ ըլլալու և ասոնց միանգամայն ըստ ամենայնի նպատակու պարտաւոր եմք: Ուստի այս առաւր ձեզ այցելութեանս առթիւ կը փութեմ իմ մասնաւոր և խորին շնորհակա- լիքս յայտնել վարժարանիս հիմնադիր Արա- բատեան ընկերութեան և նպատակ անոր տը- կար կարողութեանս չափովը: Գի նա երկար ժամանակէ ՚ի վեր անձանձորոյժ կաշխատի յատկապէս Հայաստան աշխարհի լուսաւորու- թեան համար զանազան քաղաքներ ու գիւ- ղեր դպրոցներ հաստատելով, և այսօր ալ մեր սիրելի Հայրենաց բուն կեդրոնը կը հիմնէ այս հաստատութիւնը որուն պէտքը ՚ի բա- զում ժամանակաց հետէ կը զգար ազգը, և այսպէս Արարատեան ընկերութիւնն այսօր ընդհանուր ազգին համակրութիւնը կը վայելէ:

Ազգի մը հիմնաւոր դաստիարակութեան օրինաւոր ուղղութիւն մը տալու համար երկու գլխաւոր և անհրաժեշտ միջոցներ կան. ա- ռանց այս կրկին միջոցաց ազգային դաստիա- րակութիւնը թերի է միշտ և ծանրաբայլ յորոց մին է աղջկանց դպրոց և միւսն է վարժապետանոց: Այս վերջոյն հիմնարկու- թեան մեծ փառքը Արարատեան մեծանուն ընկերութեան վերապահէն արժան է և եղաւ:

Երիտէք արդեօք, սիրելի աշակերտք, այն պաշտօն որուն համար դուք հոս կը պա- տրաստուիք, որչափ փափուկ ու ծանրալիւի է: Որովհետեւ ինչպէս որ տղայ մը իւր մար- մնական ծնունդն ՚ի ծնողաց կրնդունի, հո- գեկանն ՚ի Հոգւոյն Սրբոյ՝ որ աւագանի մը-

տութեամբ, այնպէս ալ մտաւորական ծնուն- զը ՚ի վարժապետաց կրնդունի ուղիղ և մաքուր դաստիարակութեամբ: Ըսել է որ ձեզ աշակերտելիք տղայք իրենց բարոյական կեան- քը ձեզմէ պիտի ընդունին, որով պիտի կա- րենան ապրիլ յաշխարհի ազատ կենօք, խա- զաղ սրտիւ, մաքուր վարուք և պատաւոր անուամբ:

Սիրելի աշակերտք, այսպիսի մեծ պաշտօնի մը օր մը արժանաւոր հանգիստնալու և ան- կարօտ ապրելու համար ձեզ բան մը չը պիտի պակսի երբէք, քանի որ բարեբաղդաբար Փորթուգալեան Էֆենտիին նման կանխատես և ձեզ անձուէր տեսուչ մը ունիք կարգեալ ՚ի կողմնէ Արարատեան ընկերութեան:

Ուրեմն գոչմը լիաբերան. կեցցէ՛ Արարա- տեան մեծանուն ընկերութիւն, կեցցէ՛ն անոր նպատաւամտոց ազգանուէր անձինք:

Մ. Փորթուգալեան

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՒՄԻՑԻՑ

Կ. Պօլիս 8 յուլիս

Անգղիոյ լորդերու Ժողովին մէջ հայկական հար- ցի մասին եղած վիճարանութեանց առթիւ Եւրօ- պիոյ թերթերու զանազան յօդուածներն «Մասիս» թարգմանելով կը ծանօթացնէ Ժողովուրդին. բնա- կան է որ այս յօդուածներն գոհութեան պատճառ են: Սակայն Հայաստանի Ժողովուրդն ինչ կանէ. ինքնավարութեան ինքնոյ մէջ իւր ձայնը պիտի լսուի թէ ոչ: Անցեալ տարի Լէյսթը կատէր թէ ինքնավարութեան գաղափարը Պատրիարքի մտաց ծնունդն է և թէ հայ ազգը մի աղբիւսի փափագ չէ տաճած: Մեզ անկ է ցոյց տալ թէ Պատրիարք և Ժողովուրդ տարբեր կարծիք չունեն: Բարեկո- րոգմանց խորհրդարանական յանձնախումբը կը ջանայ լաւ ուղղութիւն մը տալ Հայաստանի հայոց փափագեանց և կարծեաց: Նախորդ նամակաւ հաղորդած էի թէ կարնոյ Ժողովուրդի երեսփոխանք յայտարարել են բարեկարգութեանց համար դացող յանձնաժողովոյ թէ տեղական ինքնավարութեամբ միայն բարեկարգութիւն կրնայ յուսացուի: Հայաս- տանի մայրաքաղաքի այդ յայտարարութիւնն մեծ նշանակութիւն ունի. մանաւանդ երբ միւս գաւառ- ներն ալ, ինչպէս վստահ եմք, կարնոյ օրինակին հետեւելով նման առաջարկութիւններ մատուցանեն: Մինչև ցարդ Պատրիարքի վերանադիտական խոր- հուրդներն և միջոցներն էին որ հայկական ինքնոյ աղբան կարեւորութիւն ընծայեցին եւրօպական դահլիճներու առաջ. բայց երբ Պատրիարք նոյն իսկ Հայաստանի Ժողովուրդէն զօրաւոր նեցուկ գտնէ իւր խորհրդոց այն ատեն անշուշտ ուղիւ աղբեցու- թեամբ կը խօսի և կը գրէ: Երեկ երեկոյ հեռագիրն մեզ հաղորդեց թէ Անգղիոյ երեսփոխանաց Ժողովին մէջ պ. Պօլքը ասել է թէ, Բ. Գուռը մօտեայ երկու քովիսէր գրեցեց Հայաստան քննե- լու համար թէ Արեւելեան-Բուսթիլի կազմական կա- նոնադիրն արդեօք Հայաստանի մէջ ալ կրնայ գոր- ծադրուի:

Բ. Գուռը թէպէտ այսպիսի պաշտօնով քովի- սէրներ չէ խրկած, բայց մենք պ. Պօլքին յայտա- րարութեանը կարեւորութիւն ընծայեմք և ամեն կերպով աշխատեմք որ այդ յայտարարութիւնը իրականութիւն գտնէ: Այս առթիւ մասնաւոր ու- չարութեան արժանի է կարնոյ մատուցած ծա- նուցադիր բարեկարգութեանց նկատմամբ: Այդ ծանուցադիր համառօտութիւնը ահաւասիկ կը հա- ղորդեմք «Մասիս» ընթերցողաց: Մեր թերթերը տակաւին չը հրատարակեցին զայն և չեմք գի- տեր թէ պիտի կարենան հրատարակել. հաւանօ- րէն զորս թարգմանութիւնը «Daily News»-ի մէջ գտնէք: Երբ կառավարութեան կողմէ յանձնաժո- ղովն Հայաստան կերթար, կարնոյ Ժողովուրդը անպատրաստ չը գտնուէր համար մի քանի բա- նիւրուն անձերէ յանձնաժողով մը ընտրեց, որոյ կը նախագահէր առաջնորդն և պատրաստեց այդ ծրագիրն, զոր առաջնորդը ուժ անկ է յանձնելէ յետոյ պարտաւորեցաւ հրաժարական տալ, և ազ- գային վարչութիւնը չընդունեց:

Բարեկորդմանց ծրագիրն երկու մասի կը բա- ժնուի. ա. մասը մի յառաջաբան է, յորում կը անհնուլին Հայաստանի չարեաց պատճառներն, Բ. մասն կը պարունակէ 46 յօդուածներ որք կը պատկանին գործադրուելիք բարեկարգութեանց:

ա. Մասը 7 յօդուած կը պարունակէ որոց հա- մառօտութիւնն հետեւեալն է.

ա. Հայաստանի մէջ կառավարութեան պաշտօ- նի կոչված են միայն տաճիկներն, վարչական բու-

լոր գործերն նոցա յանձնուած են. մինչև իսկ քիւր- դերն բարձր պաշտօններ կը ստանան, իսկ հայք զրկուած են յանձնարէն:

բ. Թէպէտ տէսթուր (օրինադրեց մը կայ, սա- կայն դա տաճկաց կրօնական օրէնքն հիմ ունի. դատաւորք և պաշտօնեայք կամ Կ. Պօլսէն ըն- դունած հրահանգաց համեմատ կը չարժին, կամ քմահաճ կերպով կը գործեն:

գ. Վերաքննութեան և նախնական դատարա- նաց նախագահութիւններն նախկիններու (տաճիկ կրօնաւորներ) յանձնուած է, որք թրքաց Եֆըրի (սուրբ օրէնք) համաձայն կը դատեն և կը վճռեն: Կատաւորաց խիստ քիչ ամսական կը տրուի:

դ. Որէնքներն միայն թուրքերէն լեզուով են, ո- րով հայ Ժողովուրդը չը հասկնար, և դատաւոր ու պաշտօնեայ ըստ կամն կը գործեն:

ե. Ոստիկանութիւնը փոխանակ աւագաններն և մարդասպաններն ձերբակալելու, նոցա պաշտպան կը հանդիսանայ:

զ. Տրոց բաշխումը ապօրինաւոր է. բոլոր բե- ուր հայոց վրայ կը ծանրանայ. զինուորք ճիւղ հայոց տուններն կը բնակին, հոն կուտեն և կը խմեն, մանաւանդ երբ բանակներու փոխադրութիւն կը- լայ:

է. Նահանգին հասցիներն խիստ չնչին մաս մը միայն կը գործածուի հասարակաց շինութեան և կրթութեան:

ը. Հողային կառուածներն ապահովութիւն չու- նեն, և միշտ թէ հողատէրի ձեռքէն կը խլուին և թէ ծանր տուրքերու ներքեւ ընկնուած են:

թ. Խալամ կրօնից պաշտօնեայք մոլեռանդ լի- նելով մեծամեծ չարք կը հասցնեն հայ Ժողովուրդն, հետեւեալ կերպերով.

1. Կրօնական պաշտօնեայք ամեն կողմ քրիս- տոնէից դէմ ատուելութիւն կը քարոզեն, և զանոնք հալածեն ու կողոպտեն իբր առաքելութիւն կու- սուցանեն:

2. Քրիստոնէայիներն տառապեցնող կրօնաւորք և յափշտակողք պատիւ կը գտնեն:

3. Քիւրդերի ցեղերու մի քանի գլխաւորներն 1869 և 1875 կաքարուրին, բայց յանկարծ ազա- տութիւն գտնելով, կուզան և աւելի սաստիկ կերպով իրենց վրէժն կը լուծեն Ժողովուրդէն:

4. Քիւրդ ցեղերն զանազան տեսակ են, սպա- ռապինեալ և աներկիւղ ամեն չարք կը հասցնեն Ժողովուրդին:

5. Զերեքը և այլ խուժտուժք օր ըստ օրէ կը բազմանան:

6. Արդարութեան հակառակ Ժողովուրդը իւր տուրքէն չորս տարապարակ աշխատութեանց կը դատարարուի առանց վարձուք կամ քիչ անգամ խիստ չնչին գնով մը:

7. Բանակերու մէջ քրիստոնէից վրա ամեն տե- սակ ընտելութիւն ի գործ կը դրուի և մինչև ան- դամ չարչարանաց ներքեւ կը մեռնին: Ահա այս է յառաջաբանի համառօտութիւնը. միայն կրնամք ասել որ վերջին յօդուածն ուրիշ կերպով պէտք էր բաժանուի. ինչ և իցէ: Այս յառաջաբանը որոշ գաղափար մը կուտայ, համառօտիւ, յստակ ոճով Հայաստանի տառապանաց: Հոն անկեր և կը տես- նենք թէ բոլոր չարեաց պատճառն թիւրք կառա- վարութիւնն է. թէ քիւրդք միապապարտ չեն, զի կառավարութեան կողմէ քաջակերութիւն և պաշտ- պանութիւն կը գտնեն, և ընական է որ անկէ դրդուժ կրնդունին: Մթթէ հարկ է ասել որ թիւրք կառավարութեան այս վարչական յոռի ընթացքն զիպուժոյ արդիւնք չէ, այլ խորին կերպով մտա- ծուած յատակադէմ մը գործադրութիւնը:

Գումը Բ. մասին թէ ինչ բարեկարգութիւնք հար- կաւոր են կարնոյ նահանգի համար և որ 5 գլխոց բաժնուած է, գոր կը ներկայացնեն համառօտա- բար:

Ա. վարչութիւն

Յօդ. 1. Կարնոյ նահանգի կուսակալն կընտրուի Կ. Պօլսոյ նախարարաց Ժողովէն. ընտրեալ կուսա- կալի համար հայոց Պատրիարքի կարծիքն պէտք է առնուի. կուսակալի պաշտօնավարութիւնը որո- չեալ ժամանակի համար պէտք է լինի, և զի փոր- ձով տեսնուած է թէ թիւրք կառավարչք անկա- րող են կառավարելու, Կարնոյ նահանգապետ մի հայ պէտք է լինի. նոյնպէս պէտք է հայ լինեն Կարնոյ նահանգեղբայրաւ օր քաղաքաց միւլէթաւորքի- նին:

Յօդ. 2, 3, 4. Միւլէթաւոր և կառավարական զանազան պաշտօնեայք հայ և թիւրք պիտի լինեն հաւասարապէս. (երեք յօդուածներն մանրամասն կը բացատրեն ընտրութեանց եղանակն):

Յօդ. 5. Կրթութեան պաշտօնեայք պիտի լինի, որ կրթութիւնը և երկրագործութիւնն ու արհեստ- ներն ծաղկեցնելու պաշտօնն պիտի ունենայ: Սոյն պաշտօնէին ընտրութիւնը ընդհ. կառավարչի ընտրութեան նման պիտի լինի: Վարչական Ժողով

մը պիտի ունենայ կէս հայ կէս թիւրք իսլամ ան- դամներէ:

Յօդ. 6. Քաղաքի վարչական Ժողովը կէս հայ և կէս իսլամ թիւրքէ կը բաղկանայ: Վարչական պաշտօնեայք և նախագին ձայն չունեն այս Ժո- ղովոյ մէջ:

Յօդուած 7, 8, 9. Սոյն յօդուածներն կը բացա- տրեն թէ ինչպէս ամեն գաղապ և ամենագ (նա- հանգի ստորաբաժանումներն) վարչական Ժողովներ պիտի ունենան հայ և թիւրք իսլամ տարերքն երէ բաղկացեալ, թէ ինչ պիտի լինի նոցա աշխատու- թիւնը և ինչպէս ընտրութիւնը:

Յօդ. 10. Կարնոյ ընդհ. Ժողովը կը բաղկանայ կէս հայ և կէս թիւրք իսլամ, կը քուէարկէ նահանգի պիւճէն (կը թուէ իւր իրաւունքներն և պարտքերն):

Բ. Կատարանք

Յօդ. 11. Կարնոյ մէջ է նահանգի վերաքննու- թեան ատենը, 6 անդամներէ բաղկացեալ կէս հայ կէս թիւրք իսլամ: Ատենի նախագահն ընտ- րութիւնը ընդհ. կառավարչի ընտրութեան նման կըլլայ:

Յօդ. 12. Կարնոյ քաղաքի նախագատ ատենը 6 անդամէ կը բաղկանայ կէս հայ կէս թիւրք իսլամ: Նթէ վերաքննութեան ատենի նախագահն հայ է, նախագատի նախագահն թիւրք պէտք է լի- նի, և փոխադարձաբար:

Յօդ. 13. Սանձագիններն ունեն նախադատ ատենա- ներ նման քաղքին. նախկիններն չեն կրնար մաս- նակցել. եթէ միւլէթաւորքը հայ է, նախադատ ա- տենի նախագահն թիւրք իսլամ կը լինի, և փոխա- դարձ:

Յօդ. 14. Ամեն դատարան պիտի ունենայ իւր ընդ. փաստաբանը (Procureur général որ անկա- րողներու, անտէրերու դատին պաշտպան պիտի լինի:

Յօդ. 15. Գականերու նախադատ ատեններն չորս անդամէ բաղկացեալ են. նախագահութիւն նման 13 յօդուածոյ:

Յօդ. 16, 17, 18, 19. Սոյն յօդուածներն կը պարունակին առեւտրական դատարաններու կազ- մակերպութիւնը, նոցա պաշտօնի ժամանակն, ան- դամաց ընտրութեան եղանակն և զանազան հան- դամանքներ:

Յօդ. 20, 21. Սոյն յօդուածներն կը պատկանին հարցաքննիչներու ընտրութեան և նոցա պարտուց:

Գ. Ոստիկանութիւն

Յօդ. 22. Տեղական ոստիկանութիւնը (Gendar- merie) կը բաղկանայ կէս հայ և կէս թիւրք իս- լամ. Էքբեք և քիւրդ տարերք չեն կրնար մաս- նակցել ոստիկանութեան:

Յօդ. 23. Ոստիկանութեան առաջին հրամանա- տարներն պէտք է եւրօպացի լինեն, իսկ երկրոր- ճականներն տեղացի:

Դ. Տուրք

Յօդ. 24. Տուրքերն պիտի պահանջուին Ժողո- վուրդի կարողութեան համեմատ:

Յօդ. 25. Նոր տուրքեր պիտի չը հաստատուին, և եղածներն աւելի պիտի պարզուին իրենց տե- սակի մասով:

Յօդ. 26, 27. Տուրքն արդարութեան օրինաց համեմատ պիտի հաւաքուին և զապթիւններն տուրք հաւաքելու պաշտօն պիտի չունենան, այլ մաս- նաւոր պաշտօնակարաց ձեռօք պիտի լինին այս հաւաքումներն:

Ե. Ալի և այլք

Յօդ. 28. Թիւրք լեզուի հետ միասին հայերէն լեզուն ալ պաշտօնական պիտի լինի և ամեն պաշ- տօնական հրատարակութիւնք երկու լեզուներով պիտի լինին:

Յօդ. 29. Պաշտօնական չըջանակաց գրադիրներն և պաշտօնեաներն կէս հայ կէս թիւրք իսլամ պի- տի լինին:

Յօդ. 30. Վարչական Ժողովոյ անդամներն, երկու ազգերն առանձին առանձին պիտի ընտրեն ազգի կողմէ:

Յօդ. 31. Առանց յանցանաց ոչ մի պաշտօնեայ պաշտօնակն չը լինի. վարձատրութիւններն ար- ժանաւոր կերպով պիտի լինին:

Յօդ. 32. Պաշտօնէից պատասխանատուութեան մասին յատուկ կանոնադիր մը պիտի խմբագրուի:

Յօդ. 33. Կարնոյ նահանգն աշխարհադրական նոր բաժանում պիտի լինի:

Յօդ. 34. Նոր օրինադրեց պիտի չինուի, տաճ- կաց չերիչն դուրս և եւրօպական օրինաց համա- ձայն:

Յօդ. 35. Քրիստոնէից և իսլամաց մէջ եղած դատը դատարանները պիտի դատեն: Քրիստոնէից ժառանգական գործոց պիտի չը միջամտէ տաճ- կաց իսլամ մը (կրօնական օրինաց համեմատ):

Յօդուած 36. Պաշտօնէի կանոնաւոր թիշակ պիտի վճարուի կանոնաւոր եղանակաւ:

Յօդ. 37. Նախնայի եկամուտն բոլոր ծախսերն հոգացուի է վերջ մնացորդն պէտք է յանձնուի տէրութեան գանձուին:

Յօդ. 38. Հողային խնդիրներն կարգադրելու համար հայերէ և թիւրք խառնուրդ խառն յանձնաժողով մը պիտի կազմուի:

Յօդ. 39. Տգէտ և մոլեւանդ մասնատեալ կրօնական պաշտօնականներն մասնաւոր հսկողութեան ներքեւ պիտի աշխտեն, որպէս զի հոգալ փրկութեան պատրուակաւ ատելութիւն չը սերմանան:

Յօդ. 40. Ներքի չէ 20 տարի չը լացնողներու կրօնափոխութիւն, ազնիւ կամ կին առանցողներն աստիկ պատժի պիտի ենթարկուին:

Յօդ. 41. Քիւրդերն ու բոլոր անոնց նման թափառական ցեղերն զինաթափ առնել:

Յօդ. 42. Քիւրդերու ցեղաբանութիւններն ցըրուել և նոցա առանձին տեղեր հող տալ՝ որ աշխատութեամբ ապրեն:

Յօդ. 43. Քիւրդերու, չէրքէզներու և զանազան հարստահարիչ ցեղերու գլխաւորներն հանել երկրէն և Արարիկ խորին աքաղիւն անդարձ կերպով:

Յօդ. 44. Նոցա պաշտպաններն երկրէ դուրս հանել:

Յօդ. 45. 46. Զօրքերն անհատներու տուն բընաւ չը բնակեցնել, այլ զօրանոցներ շինել, նոյնպէս զինուորքն անձամբ կամ իրենց գլխաւորներն ժողովրդէ տանելը չը պահանջեն, այլ տեղական իշխանութիւններն հոգան նոցա պէտքերը:

Ահաւորիկ համառօտ կերպով կը հաղորդեմ կարնոյ գաւառի առաջարկութիւններն. ամեն մէկ յօդուած պատճառաբանեալ է. բայց իմ ժամանակս չէր ներեր ամբողջն օրինակել և կը ցաւիմ:

Այս ծրագիրն, ինչ որ ալ ըլլան իւր պակասութիւններն, խիստ հարկաւոր է. և մասնաւորապէս ուշադրութեան արժանի է սա կէտերուն համար թէ՛ բոլորովին կը ջրէ Սալիզպիլի այն առարկութիւններն որով կ'իմացնէր թէ առանց Տաճկաստանի գանձային բարեկարգութեան Հայաստանի համար բարենորոգում պէտք չէ յուսալ: Թէ ինչ նախարարութիւն միակ միջոց է բարենորոգմանց և ժողովուրդը զան կը փափագի, կամ լաւ եւ կը պահանջէ: Թէ՛ հայ ժողովուրդը՝ շատ նրբամիտ կերպով կը շարժի, ջանալով որ չէ թէ թիւրք տարն իրեն ստորագրանի անէ, այլ ինքն անոր իրաւանցն մասնակցի:

Այժմ կը սպասեմ միւս գաւառաց տեղեկագրերու. պատրիարքարանն գործելու ընդարձակ առարկէդ ունի. ժողովրդի այս առաջարկութիւններն որ ուղղակի Գրան քովանդներու ներկայացուած է, ի ձեռքն ունենալով 61 յօդուածի գործադրութիւնը պիտի պահանջէ:

Այս առթիւ ուրախ եմ որ Ներսէս սրբազան եւրօպական ներկայացուցիչներու համալուծմ վաճառ է և պատկառելի եղած. այս շարաթ Գերմանիոյ, Հոլանդիայի և Յունաստանի դեսպաններն միմալսն այցելութեան եկան նոյրին Քարաքոնութեան: Սա յայտնի է թէ եւրօպական կառավարութիւնը այժմ զմեզ կը նկատեն ոչ թէ մտաբանիկ ազգ մը այլ Տաճկաստանի կարևոր քրիստոնեայ տարրն ու ուղի չուզէ դեր մը պիտի խաղայ Արեւելեան խնդիրը ապագայ դարձաւորութեան մէջ. ուստի երբ մեր մտնանք Ներսէսի Ներսէսի, նոքա եւ մեզ կը մօտենան: Եստ խոսն և իմաստուն կերպով շարժելու պէտքն զգալի է:

61-որդ յօդուած անուամբ կարծիք տեսարը (որ ձեռք յղած էր որ շատ նշանաւոր եղաւ լորդ Բարնաբիլի խօսքերու մէջ, իւր պատրիարքարանի պաշտօնական մէկ հրատարակութիւնը) իւր շարունակութիւնը քիչօքէն պիտի տեղի ունենայ. 1878 յունվարէ սկսեալ մինչև ցօյնով օգոստոս կատարուած և կատարուելիք հարստահարութիւններն պիտի պարուհանէ: Արդէն այս շարքով բաւական գործիւններն հարստահարութեանց վերաբերեալ խրկուեցան առաջ. Պրաքս, որոյ բարեկամ մարքիլ օֆ Պալմա հոս էր ի Բելլինի վեհաժողովէ շատ յառաջ ալ. Պրաքս մի մեծ և բազմաձայն հացիկերով անելով հրաւիրած էր ի լօնտօն իւր բարեկամներն և Հայաստան արած ճանապարհորդութիւնը նկարագրելով ջնքով պաշտօնական հանդիսացած էր հայոց. օֆ Պալմա այն օրն զեղեցիկ կերպով խօսած էր ի նպատակ ապա պատճառաւ լաւ բնդուներութիւն գտաւ. մեկնէ թէ երկու երեք օր յառաջ իշխանաց կղզիքն «Daily News»-ի թղթակցի տունն գտնուելով, երեքիկ հայ վաճառականներն այցելութիւն տուին նմա և պէտք եղածն խօսեցան: Լորդը շատ զոհ եղած է ու մեկնելէն յառաջ իւր լուսանկարն ընծայելով ալ. Զեքալի շնորհակալութեան զիւր մը կը գրէ նմա. Զեքալի կը յայտնէ թէ մեծապէս շնորհակալ է և Պրաքս հայերէն գտած ընդունելութեան մասին և թէ ինչ որ կարող է անել հայոց դատին համար պիտի անէ:—

Թէ ինչ որ կարող է անել հայոց դատին համար պիտի անէ:—

Թֆ Պալմա խոստովանած է թէ Արեւելեան խնդիրը դարձաւորութեան մասին և մասնաւորապէս հայոց հարցի վրայ այնքան նոր տեղեկութիւններ ասացած է ալ. Զեքալէ որ շատ զոհ է. այդ տեղեկութիւններն անձամբով էին իրեն և թէ օգտակար պիտի լինին պաշտպանած հարցի մասին:

Անցեալ նամակաւ ասացի թէ Հայ երիտասարդութեան պատգամաւորութիւն մը լորդի ներկայացաւ և երկարօրէն տեսակցեցաւ հայկական խնդրի վրայ, կը հաղորդեմ երիտասարդութեան ներկայացուցած ուղերձի թարգմանութիւնը:

«Միւրօր. Հայկական դատի համար ձեր մեծութեանց ցոյց տուած համակրանքը համարձակութիւն կուտայ մեզ, յանուն և Պրաքս Հայոց, բարի գալուստ մաղթել նմա ի մեր յորմուէն:»

«Չանխուլ չէ ի մէջ, Միւրօր, թէ ձեր մեծութիւնը իւր ջանքերն միացուցեր է Անգլիոյ մեր բարեկամաց աշխատանքը բարոյեցնելու համար այն վիճակին, կըր ծանրանայ մեր եղբայր վրա. երջանիկ եմ ապաւնել, Միւրօր, որ կրնաւ ներկայ առթիւն օգուտ քաղել մեր խորին երախտագիտութիւնը յայտնել առ ձեր մեծութիւն յանուն մեր և յանուն Հայաստանի մեր եղբայրը:»

«Հայ ազգն եւ իւր կողմէն, մի դարման իւր պիտի տալու վիճակի, դատարարական զարգացման մեծապէս կայնալով, ձեռամբ բազմաթիւ ընկերութեանց, որք թէ ի Հայաստան և թէ ի Եւրոպիա նախակրթական և երկրորդական դպրոցաց թիւն կը բազմացնեն, կը բաւաւրեն զանոնք:»

«Բայց նոյնպէս յոյս ունիմք նաեւ քրիստոնեայ ու քաղաքակրթ Ներսէսի վրա, ինչպէս և բարի դիտարկութեամբ տողորուած անձանց վրա, որք ի Մեծ-Բրիտանիա յաճախ իրենց ձայնն յօգուտ բազմաշարժ ժողովուրդեան մը բարձրացնելու մարդասիրութիւն ունեցան:»

«Չմը մեծութիւնը գրաւած է առաջին աստիճան ներքէն մին ի մէջ այն լուսաւոր մտաց որք մարդկութեան և քաղաքակրթութեան օգուտը մասնաւոր շահերէ վեր կը դնան:»

Զայց երբեք դուք, Միւրօր, Օսմանեան աշխարհի և կարող եղաք ի մօտոյ ուսումնասիրել այն արեւելեան ինքնիւր որ տակաւին այնքան անկատար կերպով ծանոթ է արեւելոյց:

«Բայց որ է մեզ յուսալ, Միւրօր, թէ մեծութիւն ձեր ի մեծահամբաւ հայերնիս վերադարձինք յօթաբարձ պիտի լինի ամեն ինչ ակնեւ պարզել և իւր ազնիւ ջանքերն շնորհել ի պաշտպանութիւն իրաւանց ազգայնութեան հայոց:»

Չը մոռնամք յաւելու թէ օֆ Պալմա Ռուսիոյ տէրութեան և քաղաքակրթութեան ջերմ բարեկամներն է. և Պրաքս Ռուսական դեսպան իշխան լօպատինսկի երեք օր զմա իւր ապարանքն իւր ընկալեց:

Մեր թերթերէ մին հաղորդեց թէ Լէյպտոն սաստիկ նեղացեր է թէ երեսփոխանական ժողովոյ և թէ աղբիւր առ ազատական մասն Անգլիոյ ցոյց տուած համակրանք, և թէ այս ներուժիւր Պատրիարքին ալ հաղորդեր է: Սակայն «Մասիս» պաշտօնապէս կը հերքէ այս լուրը:

Ըստ մեզ Լէյպտոն պէտք է, իւր անգլիացի զոհ լինի որ ազատական մասն ընթացքն (թէպէտ և Լէյպտոն ալ Ռուսի է) կը պահանջէ Անգլիոյ պատիւն Արեւելոյ մէջ:

Զէյթունէն նոր տեղեկութիւն չը կայ: Զէյթունէն մեկնած են բարեկարգիչ տեղական յանձնաժողով մը կազմելով և զի Զէյթուն խիստ քիչ տաճիկ կայ հեռաւոր տեղերէ տաճիկներ բերել տուած են և յանձնաժողովոյ մէջ դրած են:

Խիստ ստույգ տեղեկութիւն ունիմք թէ, Զէյթունի Պապիկ իշխանը 500 զօրքերով լեւոնեան ամրացեր է և տեղական իշխանութեան իմաց տուեր է թէ պիտի յարձակի Զէյթունի մէջ օսմանեան զօրաց վրայ և զանոնք վանէ, եթէ չընդունուն Զէյթունեաց պաշտաններն ու զօրքերն ինքնին չը քաշուին: Այժմ բոլոր Զէյթունի յոյն Պապիկ իշխանի վրայ է: Թիւրք կառավարութիւնը 500 լիւրա օսմանցի խոտացներ է ու որ ողջ կամ մեռած Պապիկ իշխանը բռնէ:

Տիգրանակերտէ և Սարբերդէ մեր առած լուրերն շատ քրահուցիչ չեն. երկպառակութիւնը կը արեւ ժողովուրդի մէջ. Սրբանձնեանց վարդապետ և Պրաքսեան մեծ դժուարութեան մէջ են. մի բարեկամ Տիգրանակերտէն հետեւալ տխուր տողերն ինձ կը գրէ «Տիգրանակերտ հանդէս ի վեր կարի խռովեալ է հոգիս. էհ, կրնան եղբայր անպիտան առաջնորդները մէկ զարնելով ազգի մը յոյսն կործանել: Թէ Սարբերդ և թէ հոս անցեալ տարիներէ խիստ տարբեր են. ազգային ներկայ անեղ օրեր ու խնդիրներ չեն ազգի տանոց. երկու տեղն ալ սարսափելի է խռովութիւնը, յա-

տուկ առաջնորդաց ձեռքով յարուցուած. ամբոխ, կորք և աղիւտութիւն փոխանակ օրինակ և օգտի հասարակաց կը թագաւորեն. վայ ազգի բաղդին որ այսպիսիպէս ձեռքն է մնացեր. ընկերութիւնները իրենց գործիք են ըրած, ժողովուրդը իրենց նետ ու վահան. աղբախրութիւն ալ չեփօրի տեղ կը հարկանեն, և բոլոր միաթիւ ժողովուրդը մարդամեքենայ զօրաց բանակի մը պէս կը շարժեն և կը կռուեցնեն: Տեղույս ընկերութիւնները այս վիճակին մէջ են, նոյնպէս ժողովուրդն: Կառնամ ու կը ցաւիմ առաջնորդաց ըրածին, վարժապետաց ըրածին և ժողովուրդեան կրածին վրայ:

Քոմսէրը դեռ գործ մը չէ ըրած. ստուար բազմութիւն ժողովուրդեան լցուած է Տիգրանակերտ, բողոքներ կուտան: Մանաս Էֆէնտին Մէրալին գնացեր է ուր Միւթասարիֆի շարքը կը ընէ և քրքրաց ու արաբաց արաբը, որք մօտ օրերս քանի մը դեղ ապրեր են, և կըսուի թէ 40-էն անելի մարդ պահներ են:

Տարուէն կը հաղորդեն թէ Տէլիլի բաշա հրաման ընդունել է անմիջապէս զարնել քիւրդերը և Բուսէլիի գաղթական տաճիկները հոս լեցնել:

Կարնոյ հայերու քաղաքործութիւններն բաւական աղմուկ պատճառեցին հոս. Ս. Պատրիարքի մտատանջութիւն կուտան. թիւրք թերթերն կրակ կորած են: Ահաւորիկ եղեղութիւնը ինչպէս որ կը պատմեն պարսիկ տղայ մը հայ աղջկան մը պատիւը կարտաէ. պարսիկը կը ձեռքալաւուր, բայց հայը դիտնալով որ նա խալմ լինելով կամ կարծակին, կամ կը փախցնեն, կը պահանջեն որ անմիջապէս դատատանն լինի. ասոր վրայ վէճ կը ծագի հայոց և պարսից մէջ. հայը կը յարձակին պարսից վրայ. կառավարութեան զինուորներն կը հաննեն, հայերն նոցա վրայ եւ կը յարձակին և երեք զինուոր կը վիրաւորեն: Կուսակալը կուգայ կը հանդարտեցնէ: Կ. Պոլսի երեք հեռագիր հասած է, մին կառավարութեան կողմէ, մին պարսից հրապարտի կողմէ առ իւր դեպքանատունն, միւսն մեր առաջնորդէն առ պատրիարքարան: Բ. Գրան հեռագիրը ինձ ծանօթ չէ, սակայն պատրիարքարան և պարսից դեսպանատունը հասած հեռագիրներն բաւական իրարու հակառակ են:

Ահաւորիկ կարնոյ առաջնորդի հեռագիրն զոր «Մասիս» կը հրատարակէ ձերէկուսն օրը (յուլիս 2) կարնի գտնուող 5—600 պարսիկք՝ սպառազինեալ՝ Կէնչ—Պալի ըստած չուկայն մեր ազգայնոց վրայ բռնադատով 15 անձ վտանգաւոր կերպով վիրաւորեցին. նոյն պահուն երկու կողմէ ալ բազմութիւնը շատցաւ, բայց կառավարչի փաշային չնորհիւ առաջն առնուեցաւ: Այստեղի պարսիկները կը սպառնան սաստիկ գէշութիւն ընել մեր ազգայնոց: Մանրամասնութիւնը նամակաւ:

Իսկ պարսից դեսպանատունը եկած հեռագիրը, զոր կարդացի ընազրին մէջ, կը մեղադրէ հայերը, թէ յուլիս 2-ին հայի վաճառման ժամանակ առիթ մը գտնելով պարսից հետ կուռի կը բռնուին. նոցա վրայ կը յարձակին, խանութները և շուկայները պղծելով կը սկսին ծեծել պարսիկներն, զինուորներն կը հաննեն հայք նոցա ալ կը դիմադրեն և այդ ժողովուրդը որ այնքան աղմուկով ինքզինքն հարստահարեալ կառէ և բարեկարգութիւն կը պահանջէ սպալիս բռնաւորական գործեր կանէ և այնպիսի նշաններ ցոյց կուտայ որ նպատակներ ունեն. կայսերական զօրաց վրայ կը յարձակին ընդմիջմանով. կառավարչին չեն անար. եւ եղեղութիւնը միւս հրապարտաց ալ հաղորդելով բողոքեցի. ամեն կողմը յայտարարութիւն անել տուի թէ այլ եւս վտանգութիւն չունիմք (պարսիկներն) հայոց վրայ. կը խնդրեմք ի ձեռք մը մեր արտաքին գործոց պաշտօնատան հաղորդէք:

Հեռագիրն կարելու մասերն ասոնք են. ինչպէս երկու հեռագիրներէ կը տեսնուի հրապարտուր բողոքովին հայերն մեղադարտ կ'անեն, իսկ առաջնորդարանը պարսիկներն: Մանրամասն տեղեկութեանց համար թղթատարի կը սպասուի: Հեռագիրներն կը շարունակուին:

Քանի մը օր առաջ պարսից դեսպանն Պատրիարք սրբազանին գալով երկար տեսակցութիւն արած էր և սիրալիր ընդունելութիւն ցածած, անմիջապէս վերջը այս դէպքը տեղի ունենալն ցաւալի է, եթէ խնդիրն միայն տաճկաց վրայ լինէր շատ ուրախ պէտք է լինեմք. բայց քանի որ օտարազգիներն են պարսիկներ, մասնաւոր բազում հայք կան Պարսկաստանի մէջ կը վշտանաւ որ այս դէպքն տեղի ունեցեր է: Սակայն և գոհութիւն ունիմք որ այս դէպքն փոքրիկ ազդարարութիւն մը պիտի լինի, թէ հայք եւս կարող են ի հարկին ինքնզինքնին պաշտպանել ուստի ըստ այնմ շարժելու է:

«Մասիս» հետեւալ խորհրդածութիւնը կ'անէ «Որ յուսամք որ կարնոյ իշխանութիւնը դո՛ւն է կայսրական և Քոմսէի Էրնէրօն Կոնստանտնուպոլսի մէջ և Կոնստանտնուպոլսի մէջ անաշտ ընթացք մը

բռնեն այս գործին մէջ, և Հայոց իրաւունքը կողմնակալութեան զոհ չըլծան:

Նրեափոխանակ. ժողովը յուլիս 6-ի դռնիակ նիստ անելով կրկին Հայաստանի խնդիրներով զբաղեցաւ, բարենորոգմանց յանձնաժողովոյ տեղեկագիրն լսեց և յանձնաժողովոյ հետեւալ վստահութեան քուէ տուաւ:

«Ազգային ժողովն իւր բարենորոգմանց յանձնախմբին տուած տեղեկութիւնները լսելով հաւանեցաւ անոր ամեն գործոց ու համոզուեցաւ որ Ս. Պատրիարք հայրն և իւր յանձնախմբին իրենց պաշտօնին մէջ կարելին ի գործ դրած են:»

Պ. Չեֆեան և պ. Քօչարեանց հոս հասած են մի շարքով, քիչ օրէն կը մեկնի. Գերասիմօսէիներ, դերասաններ և հեղինակութիւններ ու թարգմանութիւններ ի ձեռս բերելու խօսք կայ:

Պրաքս մէջ երկու դերասաններ կան, որք կարենմ ձեզ անձամբ չեն, մին պ. Յատուկանեան և երկուքն ալ Կ. Պոլսոյ ժողովուրդն չափազանց զոհ ըրած են, և մեծ ցաւ է մեզ եթէ մեզմէ յափշտակէք, զի ալ ոչ զք ունիմք: պ. Արամեան սիրահարական դերերու մէջ մեծ կատարելութիւն ունի. երբ նա խմբի մը մէջ գտնուելով տեսարան կեղծք ժողովուրդը ուրախութեամբ կը վազեր ի թատրոն, եթէ չեմ սխալի պարոններն Տիփիս երկար կուցած և Տիփիսի բարբառն իրենց համար դժուար չէ. մեր դերասանութիւնը մէջ փոքրիկ Վիրգինի Գարագաւան մը կայ որ շատ սիրելի է հայ և տաճիկ հասարակութեան: Կը յուսամ թէ պ. Աղա՝ մեանց եթէ քաջ զոհ պիտի լինիք:

Սակայն եթէ ուրիշ դերասաններ բերեն, ինչպէս են պ. Մնակեան և այլն, պէտք է նոցա համար կամ Պրաքս դերասանութիւն բերի միմային, կամ ձեր դերասանութիւնը միջնորդարան երկաթ գեղատներով պատսպարել, պատճառն այն է որ մեր պարոնաց դերասաններն և թատրոնի տեսուհներն դերասանութիւնը ծեծելու սովորութիւն ունին:

Երբ Կ. Պոլսոյ մէջ 15—20 տարիներ առաջ հայ դերասաններու խումբ կը կազմուէր օրիորդ Արուսեակ կը փայլէր, Ա. հայ դերասանութիւնը էր մեր այն ատեն փոքրիկ տղայներ էինք և կը յիշեմք թէ ինչ պահանջներով կը խօսուէր, օրիորդ Արուսեակին վրա. օրիորդը կըլլայ տիկին Պէլեքեան. անձնական տկարութիւնը վրա կը հաննեն և երկար ատեն թատերաբեմին վրա ալ եւ չեւելիւ. վերջին ատեններն մի քանի ներկայացմանց մէջ ի հանդէս կեղծ. իւր ժամանակակիցներն կը դիմեն տեսնել իրենց սիրելի դերասանութիւն մի անգամ եւ, մեք կերթումք լսել այդ հայ Տէժաղէն, սակայն երբ Տէժաղէ վերջը ներկայացման դուք սերու, աղմուկականներու և ընտիր երիտասարդութեան մը բազմութիւնը կը ծափահարէր, հայ դերասանութիւն իր ընկերներէն կը գանակոծուի և արտասուելով օժեակ մը կ'իյնայ:

Ներկայացման պահուն տ. Արուսեակ անհանգիստ լինելով կը խնդրէ որ իւր դերն ուրիշ օրիորդ մը կատարէ, որ արդէն դիտել, չեն հաւանի և կը ծեծեն գնա: «Մասիս» մէջ կը գտնէր տիկինի նամակը: Զարմանալին այն է որ այդ ծեծող պարոնները թղլեան, Մնակեան և այլն, ինքն զինքնին բանաստեղծ կանեն և փափուկ զգացմանց տէր կը կարենն զանձներին: Պ. թղլեան դաւատու է, Ներսէս կը թուած, քանի մը շարքով առաջ ինքն ծեծ կուտէր դպրոցի տեսուհներէ և յետո կը բողոքէր հայտուել, որ չարի ալ իրենց արժա նապատուութիւնը կը յարգեն որ վրէժը խեղճ կ'ինէ մը կը լուծեն:

Հայկակ

ԻՍԼԱՄԻ ԼՈՒՐԵՐ

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ յուլիս 1-ից ներկայ տարւոյ մինչև յունվարի 1-ը 1880 թվի կարելի է գրել «Մշակին» վճարելով 6 ռուբլ:

Մեզ հաղորդում են ԵՐԶՐԱՄԻՅԷ, որ անգլիական տէրութիւնը նշանակել է կապիտան Լեկտօնին իր հրապարտ Վանի մէջ:

Իրադրները հաղորդում են որ Երզրումի մէջ անկարգութիւններ են պատահել հայերի և պարսիկների մէջ: Երբ ժողովրդը եղել է այն որ պարսիկները բռնել էին մի հայ աղջիկ կամեանալով նրան մասնատակաւորութեամբ դարձնել: Խաղաղութիւնը վերականգնեցնելու համար բոլոր միջոցները գործ դրվեցան:

Խմբագիր-Հատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

